ԱԶԳԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ «ԱՖՐԻԿՅԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄՈՒՄ»

Ա. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ազգային-ազատագրական պայքարը Արևադարձային Աֆրիկայի երկրներում համաշխարհային հասարակական մտքի ասպարեզ դուրս բերեց աֆրիկյան ազգայնականության գաղափարախոսությունը, որը ներառում է աֆրիկյան գաղափարախոսության տարբեր ուղղություններն արտացոլող սոցիալ-քաղաքական տեսություններն ու կոնցեպցիաները։

Աֆրիկյան ազգայնականության գաղափարախոսության ձևավորումն ու զարգացումը տեղի ունեցավ սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ստեղծման դարաշրջանում, որը սկիզբ դրեց գաղութատիրության փլուզմանը։ Հասարակական միտքը Արևադարձային Աֆրիկայի երկրներում կրել է սոցիալիզմի գաղափարների մեծ ազդեցությունը։ Ազգայնականության գաղափարախոսները սոցիալիզմը դիտում են իբրև մի ուղի, որն ընդունակ է ապահովելու նեգրա-աֆրիկյան հասարակության առաջընթաց զարգացումը։ Այդ երկրներից շատերի համար սոցիալիզմը դարձել է դարավոր հետամնացությունը հաղթահարելու և ազգային անկախ էկոնոմիկա ստեղծելու լավագույն ուղի։

Սոցիալիստական տենդենցները Արևադարձային Աֆրիկայի երկրներում ծագել ու զարգացել են եվրոպական հասարակություններից տարբերվող սոցիալական բազայի վրա։ Այդ տարբերությունն արտահայտվում է ամենից առաջ այն բանում, որ նեգրա-աֆրիկյան երկրներում դասակարգային շերտավորումը գտնվում էր սաղմնային վիճակում և դասակարգերի գոյացման պրոցեսը այնտեղ նոր էր սկսվել։ Սոցիալիզմի գաղափարները Արևադարձային Աֆրիկայում ծագել են ոչ թե նեգրա-աֆրիկյան հասարակության մեջ տեղի ունեցած դասակարգային պայքարի հետևանքով, այլ ազատագրական հակագաղութատիրական պայքարի անհրաժեշտությունից և գաղութային շահագործմանն ու ճնշմանը վերջ տալու ձգտումից։

«Աֆրիկյան սոցիալիզմի»[1] գաղափարախոսության հիմքում ընկած է նեգրա-աֆրիկյան հասարակության, այսպես կոչված, «ինքնատիպության» կամ «բացառիկության» գաղափարը։ «Աֆրիկյան սոցիալիզմի» գաղափարախոսների կարծիքով աֆրիկյան հասարակության մեջ վաղուց ի վեր գոյություն են ունեցել սոցիալիստական տարրեր՝ մասնավոր սեփականության, դասակարգային շերտավորման բացակայության, համերաշխության ավանդույթների առկայություն։

Անկախության նվաճման և տովերեն պետությունների կազմավորման հետ միասին ազգի ու պետության պրոբլեմը մեծ հրատապություն և գաղափարա-

---

[1] *«Աֆրիկյան սոցիալիզմի» ականավոր գաղափարախոս է Սենեգալի պրեզիդենտ, հայանի բանաստեղծ և փիլիսոփա Լ. Սենգորը։ Աչքի են ընկնում նաև Թունիսի պրեզիդենտ Հ. Բուրգիբան, հայտնի քաղաքական գործիչներ Տ. Մբոյան, Մ. Դիան, Դ. Թիամը և ուրիշներ։*

կան-քաղաքական նշանակություն ձեռք բերեց «աֆրիկյան սոցիալիզմի» գաղափարախոսության մեջ։

Իսկ ինչպե՞ս են մեկնաբանում ազգի ու պետության պրոբլեմը «աֆրիկյան սոցիալիզմի» գաղափարախոսները։ Նրանց առջև առաջին անդամ ծառացած ազգի պրոբլեմի բնորոշ առանձնահատկությունն այն էր, որ Արևադարձային Աֆրիկայում պետության ծագումը մեծ չափով նախորդել է ազգի ձևավորման պրոցեսին, որը շատ պետություններում դեռ չի էլ սկսվել։ Այսպիսով, ստեղծվել է այնպիսի իրադրություն, որը պատմական նախադեպ չի ունեցել եվրոպական պետություններում։ Այս իրադրության մեջ ազգային ինտեգրացիան և ազգերի ձևավորման պրոցեսը նեգրա-աֆրիկյան պետություններում պատմական ներքին զարգացման հետևանք չէ, այլ տեղի է ունենում հիմնականում պետական ինստիտուտների միջամտության շնորհիվ, որոնք խթանում և արագացնում են ազգի միասնության պրոցեսը։

Հակագաղութային պայքարի տարիներին ազգային ինքնագիտակցության աճը, անկախության նվաճումը և ինքնուրույն պետությունների կազմավորումը կանխորոշեցին ազգային-քաղաքական ընդհանրության մեջ տարբեր ցեղերի ու ժողովուրդների միավորման պրոցեսի արագացած զարգացումը. այդ ընդհանրությունը դառնում է ապագա աֆրիկյան ազգերի կազմավորման նախադրյալը։

Մինչգաղութային ժամանակաշրջանի Արևադարձային Աֆրիկայում ազգերի ձևավորման պրոցեսի դանդաղումը բացատրվում է նախ և առաջ նեգրա-աֆրիկյան ժողովուրդների հետամնացությամբ։ Դրա լուրջ պատճառներից է եղել ստրկավաճառությունը։ XIX դ. վերջին ստրկավաճառությանը փոխարինելու եկան գաղութային տիրապետությունն ու շահագործումը։ Ստրկավաճառությունն ու գաղութային զավթումները կասեցրին Արևմտյան Աֆրիկայի այնպիսի ծաղկող միջնադարյան պետությունների ու կայսրությունների զարգացումը, ինչպիսիք էին Գանան, Մալին և Բենինը արևմուտքում և Կոնգոն՝ Կենտրոնական Աֆրիկայում։ Դրանք ունեցել են բավականաչափ բարձր կուլտուրա և առևտրական լայն կապեր Եգիպտոսի ու Մերձավոր Արևելքի հետ։ Այդ պետություններում ցեղերին ու ժողովուրդներին հնազանդեցնելու և միավորելու միջոցով գերագույն իշխանությունը որոշ չափով նպաստում էր խոշոր հասարակությունների համախմբմանը։ Ամերիկայի և Հնդկաստան տանող ծովային ուղու հայտնագործման հետ միասին այդ պետությունները կորցրեցին իրենց առևտրական նշանակությունը որպես արևադարձային ապրանքների ու փղոսկրի մատակարարողների և դարձան Նոր Աշխարհին ստրուկներ մատակարարողներ։ Ստրկավաճառությունը սպառեց մայրցամաքի շատ շրջանների մարդկային ռեսուրսները և անկման հասցրեց վերոհիշյալ երբեմնի ուժեղ պետություններին։ Բացի այդ, գաղութարարները ցեղային անջատվողականություն բորբոքելու և տարածքները արհեստականորեն մայր երկրների միջև բաժանելու միջոցով Արևադարձային Աֆրիկայի շատ ժողովուրդների տարանջատեցին։

Աֆրիկյան պետությունների ղեկավարները հասկանում են ազգային պրոբլեմի ամբողջ կարևորությունը և ջանքերն ուղղում են իրենց պետությունների տարածքում ապրող էթնիկական խմբերի միավորմանը։ Ազգային պրոբլեմը նրանք դիտում են պետության հետ անխզելի կապի մեջ, քանի որ Արևադարձային Աֆրիկայի պայմաններում միայն պետականությունն է, որ նախադրյալներ է ստեղծում ազգային միասնության և ազգի ձևավորման համար։ Ըստ նրանց,

աֆրիկյան համայնքը, որը հիմնված է նեգրա-աֆրիկացիների «ոգու միասնության» վրա, համերաշխ սոցիալական օրգանիզմ է՝ ընդունակ դառնալու ազգային ինտեգրացիայի հիմքը։ Նրանց կարծիքով աֆրիկյան ավանդական կուլտուրան պետք է կարևոր դեր խաղա ազգի ձևավորման պրոցեսում։ Ազգը նրանց մեկնաբանմամբ բնորոշվում է ոչ միայն տերիտորիայի, տնտեսական գործունեության ու լեզվի ընդհանրությամբ, այլ հիմնականում կուլտուրական ու հոգևոր արժեքների ընդհանրությամբ։ «Երբ Սենգորը խոսում է նեգրա-աֆրիկյան ազգի մասին,— գրում է Դ. Թիամը,— նա այն բնորոշում է որպես սպիրիտուալիստական-քաղաքական կամ քաղաքական-միստիկական ընդհանրություն։ Նեգրա-աֆրիկյան ազգը հիմնված է քաղաքակրթության արժեքների ընդհանրության վրա, կուլտուրական այն ամբողջականության վրա, որ հեղինակն անվանում է «նեգրիտյուդ»[2]։

Կուլտուրական ընդհանրության մեջ, «աֆրիկյան սոցիալիզմի» գաղափարախոսների կարծիքով, թաքնված են ազգային ինքնորոշման պոտենցիալ հնարավորություններ։ Աֆրիկյան ժողովուրդները, հակառակ գաղութարարների վարած կուլտուրական ձուլման քաղաքականության, կարողացել են պահպանել իրենց ազգային ինքնօրինակությունը, գաղութարարներին հակադրելով նեգրա-աֆրիկյան ժողովուրդների կուլտուրական և հոգևոր արժեքների ընդհանրությունը։ Կուլտուրայի այդ ընդհանրության մեջ ևս այդ գաղափարախոսները տեսնում են աֆրիկյան կուլտուրական ինստիտուտների ինքնորոշման հիմքը։

Աֆրիկյան պետությունները կազմավորվել են սոցիալական այնպիսի հիմքերի վրա, որոնց բնորոշ է տնտեսական տարբեր կացութաձևերի գոյությունը՝ համայնականից մինչև արտադրության կապիտալիստական եղանակը՝ համայնական կացութաձևի նշանակալի տարածմամբ, իսկ կապիտալիստական կացութաձևը ներմուծվել է դրսից՝ գաղութարարների գալու հետ միասին։ Ապրանքա-դրամային հարաբերություններն արմատավորվում էին նեգրա-աֆրիկյան հասարակության մեջ, քայքայելով համայնական կազմակերպությունը։ Իհարկե, աֆրիկյան բնակչության մեծ մասը չէր կարող փողն ու ապրանքն ընդունել որպես արտադրության ավելի առաջադիմական եղանակի հիմք, որպես առաջընթաց մի քայլ իր պատմական զարգացման մեջ։ Գյուղական բնակիչները տնտեսական առաջադիմությունն ընկալում էին որպես մի չարիք, որ բերել են օտարերկրացիները։ Սովետական հետազոտող Բ. Ս. Երասովը գրում է, որ «գաղութային պայմաններում փողը և ապրանքը աֆրիկացու համար ստանում են շոշափելի «հակասոցիալական» բնույթ, եթե դրանք դառնում են ինքնուրույն շարժիչ ուժ։ Փոխանակ հանդիսանալու հասարակական հատկանիշների և հարաբերությունների արտահայտություն («ապրանքային ֆետիշիզմ»), փողը և ապրանքը պայթեցնում են այդ հարաբերությունները. դրանք ունեն օտարացած «օգտակարություն», որն անմատչելի և անգամ թշնամի է դրանց նկատմամբ քիչ թե շատ կայուն իրավունքներ չունեցող աֆրիկացու համար»[3]։ Այդ պատճառով էլ աֆրիկացի շատ տեսաբաններ մասնավոր սեփականատիրական տենդենցների երևան գալը և ապրանքա-դրամական հարաբերությունների տարածումը դիտում էին ոչ թե որպես գիտատեխնիկական հեղափոխության դարաշրջանի մեջ

---

[2] D. Thiam, La politique etrangere des Etats africaine, Paris, 1963, էջ 47։

[3] Б. С. Ерасов, Тропическая Африка: идеология и проблемы культуры, М., 1972, էջ 141։

աֆրիկյան ժողովուրդների ներգրավման վկայություն, ոչ թե որպես աֆրիկյան հասարակության շարժում դեպի սոցիալ-տնտեսական զարգացման ավելի բարձր աստիճան, այլ իբրև գաղութատիրության ներմուծած օտար տարրեր։ Գաղութատիրությանը ցույց տված իրենց դիմադրության մեջ «աֆրիկյան սոցիալիզմի» գաղափարախոսները հրաժարվում էին ընդունել նեգրա-աֆրիկյան հասարակության մեջ ավանդական կացութաձևի հեղաբեկման և դասակարգային շերտավորման տենդենցները, որոնք արդեն նշմարվել ու ուժեղանում էին գաղութացման ժամանակաշրջանում։ Նրանք առանձին հույսեր էին կապում կուլտուրայի, գաղափարախոսության և համերաշխության ավանդույթների ինտեգրացնող դերի հետ։ Բայց հասարակության հասարակական-տնտեսական կառուցվածքը չի կարող հենվել միայն կուլտուրական արժեքների վրա, որոնք իրենց հերթին հասարակական հարաբերությունների ծնունդ են։ Համայնական կացութաձևը ծագել ու ձևավորվել է ոչ թե կուլտուրայի և ավանդույթների հիմքի վրա, այլ, առաջին հերթին, արտադրության որոշակի եղանակի հիման վրա։

«Աֆրիկյան սոցիալիզմի» գաղափարախոսության մեջ կուլտուրան կրում է ամենամեծ բեռը ազգային միասնության հարցում, իսկ կուլտուրական ինքնատիպության տեսության մեջ այն ներկայացվում է որպես ազգային ինքնորոշման հիմնական նախադրյալ։ Կուլտուրական անկախությունը այստեղ կանխադրում է անկախություն քաղաքական, տնտեսական և սոցիալական առումով։ Փառաբանելով հոգևոր և կուլտուրական ասպեկտները և վկայակոչելով Հեգելին, Լ. Սենգորը ազգը իդեալիստորեն մեկնաբանում է որպես «ազգային ոգու» ընդհանրություն։ Նրա մեկնաբանմամբ՝ ազգի որոշիչ գործոնը «համատեղ ապրելու ցանկությունն է»[4], ըստ որում՝ ազգային ինտեգրացիայի անհրաժեշտ տարրը և պայմանը պետք է լինի, առաջին հերթին, նեգրա-աֆրիկյան ժողովուրդների միասնության ընդհանուր ներդաշնակության մեջ մտնող բարոյական և հոգևոր ուժերի հավասարակշռությունը։

Ազգի ձևավորման հիմնական պայմաններից մեկը, եթե ոչ ամենակարևորը, «աֆրիկյան սոցիալիզմի» գաղափարախոսների կարծիքով, անձի կուլտուրական կատարելագործումն է։ «Որպեսզի ժողովուրդը ազգ դառնա,— ասում է Լ. Սենգորը,— հարկավոր է, որ անձը կյանքի և կուլտուրայի մակարդակը բարձրացնելու միջոցով դառնա անհատ»[5]։ Ազգի նման մեկնաբանումը ճիշտ չէ, քանի որ Արևադարձային Աֆրիկայում, որտեղ կենսամակարդակը չափազանց ցածր է, իսկ անգրագիտությունը խավարի մեջ է պահում բնակչության ճնշող մեծամասնությանը, միայն արտոնյալ վերնախավը կարող է համապատասխանել Լ. Սենգորի առաջադրած չափանիշներին։ Իհարկե, կուլտուրայի և կյանքի մակարդակը բարձրացնելու պահանջներն առաջադիմական են, բայց առանց պրակտիկ իրականացման դրանք մնում են լոկ որպես բարի ցանկություններ։ Վերնախավը, որը հանդես է գալիս ամբողջ ժողովրդի և նեգրա-աֆրիկյան կուլտուրայի անունից ու իր ձեռքում է պահում նոր պետությունների կառավարման ղեկը, ներկայանում է որպես ամբողջ ազգի մարմնացում։ Սա-

[4] L. S. Senghor, Nation et la voie africaine du socialisme, Paris, 1961, էջ 113.
[5] Նույն տեղում, էջ 41։

կայն վերնախավի կուլտուրան և կյանքի մակարդակը ավելի շատ համապատասխանում է եվրոպական չափանիշներին։

Հեշտը դնելով կուլտուրայի՝ որպես «մարդկային ամբողջ գործունեության հիմքի, էության և ձևի» առաջնության վրա, և կուլտուրան ներկայացնելով որպես ազգային ինքնորոշման և ազգային համախմբման հիմնական նախադրյալ, այդ վերնախավը դրանով իսկ արտահայտում է բնակչության արտոնյալ խավերի շահերը։ Այդ վերնախավի ներկայացուցիչները մոռանում են, որ աֆրիկյան ժողովուրդների կուլտուրական մակարդակը բարձրացնելուց առաջ անհրաժեշտ է վիթխարի վերափոխումներ իրականացնել տնտեսական և սոցիալական բնագավառներում, ոչնչացնել հետամնաց նահապետական կացութաձևը, ստեղծել սեփական ազգային էկոնոմիկա, մի խոսքով՝ ժողովուրդներին տանել սոցիալական առաջադիմության ուղիով։ Սահմանափակվելով սեփական շահերով, կառավարող վերնախավը մի կողմ քաշվեց տնտեսական և կուլտուրական շինարարության մեծ խնդիրների լուծումից, հրաժարվեց բնակչության բոլոր խավերին մոբիլիզացնելուց, բոլոր էթնիկական խմբերին միավորելուց՝ համազգային ծրագրեր իրականացնելու համար։ Սեկու Տուրեն առաջիններից մեկը նկատեց այդ «օտարացածությունը» ժողովրդից, ցույց տալով նրա և բնակչության մեծամասնության շահերի հակասությունը։

Կառավարող վերնախավը ազգի հասկացությունը և ազգային ինտեգրացիայի պրոցեսը կտրում է նրա բնապատմական և սոցիալ-տնտեսական արմատներից։ «Աֆրիկյան սոցիալիզմի» տեսաբանները, ըստ էության, իդեալիստորեն են մեկնաբանում ազգի համախմբման ու ձևավորման պրոցեսը, ազգը դիտելով որպես արտապատմական երևույթ։ «Ազգ» հասկացությունը նրանք մեկնաբանում են «պետություն» հասկացության նմանությամբ։ Պետությունը նրանք դիտում են որպես ազգի արտահայտություն, որպես ազգի գոյացման միջոց։ Պետություն հասկացությունը «աֆրիկյան սոցիալիզմի» տեսաբանների մոտ կրում է բավական վերացական բնույթ, քանի որ պետության դերը նրանք դիտում են ոչ միայն հասարակական կառուցվածքի հիմքում ընկած տնտեսական բազիսից անկախ, այլև առանց հաշվի առնելու հենց պետության դասակարգային բնույթը։ Ազգի ձևավորման գործում վերնաշենքի դերի չափազանցումը կանխորոշվում է այն օբյեկտիվ առանձնահատկությամբ, որն առաջացել է Արևադարձային Աֆրիկայի պետությունների կազմավորման ժամանակ։ Դրա էությունն այն է, որ քաղաքական մեխանիզմը այդ պետություններում իր կազմակերպվածության և զարգացածության աստիճանով շատ առաջ է անցել արտադրողական ուժերից, քանի որ այստեղ պետությունը ձևավորվում է որպես արտաքին աշխարհի հետ հասարակության հարաբերությունների կարգավորման կարևորագույն գործիք։ Բացի դրանից, հին բազիսում հասարակության արտադրողական ուժերը դեռևս չէին հասել այն մակարդակին, որպեսզի համապատասխանեին նոր վերնաշենքին։

Պետությունը, «աֆրիկյան սոցիալիզմի» գաղափարախոսների կարծիքով, կապված չէ դասակարգային հասարակության քաղաքական կազմակերպության հետ։ Պետության պրոբլեմի նման մեկնաբանության մեջ նկատելի է պետության մասին բուրժուական տեսությունների ազդեցությունը, տեսություններ, որոնք ձգտում էին ապացուցել պետության «վերդասակարգային» բնույթը և հերքել մարքս-լենինյան ուսմունքը պետության մասին։ Վ. Ի. Լենինը գրել է,

որ «...հազիվ թե մի ուրիշ հարց, որը դիտավորյալ թե ոչ-դիտավորյալ կերպով բուրժուական գիտության, փիլիսոփայության, իրավագիտության, քաղաքատնտեսության և հրապարակախոսության ներկայացուցիչների կողմից այն աստիճան խճճված լինի, որքան պետության հարցը»[6]։

Պետության սահմանները, որ ժառանգություն են թողել գաղութարարները, խանգարում էին նեգրա-աֆրիկյան ժողովուրդների միասնությանն ու համախմբմանը։ Տարբեր լեզուներով խոսող բազմաթիվ էթնիկական խմբերի ու ցեղերի առկայությունը խոչընդոտում էր լեզվական ունիֆիկացման և ազգային համախմբման պրոցեսին։ Հարկ է նշել, որ լեզվական ունիֆիկացման հարցը, որը կարևորագույն նշանակություն ունի ազգային միասնության համար, ինչ-որ չափով լուծվել էր գաղութատիրության կողմից, որը գաղութներում որպես տիրապետող լեզու պարտադրել էր մետրոպոլիայի լեզուն։ Այսպես, ֆրանսերենը Արևադարձային Աֆրիկայի ֆրանսալեզու պետություններում դարձել էր փոխըմբռնման հզոր միջոց և տարալեզու ցեղերի ու ժողովուրդների միավորման պրոցեսի խթանիչ։ Բայց այդ ունիֆիկացումը գաղութատիրության ժամանակ ծառայում էր մետրոպոլիտի շահերին՝ որպես նեգրա-աֆրիկյան ժողովուրդների բռնի ֆրանսականացման ու կուլտուրական ձուլման միջոց։

Ազգի ձևավորման գործում մեծ դեր են կատարում քաղաքները, ինչպես նաև ճանապարհներն ու կապի միջոցները։ Գաղութարարներն իրենց տնտեսական շահերից ելնելով ճանապարհները կառուցում էին սավաննաների ու ջունգլիների միջով, որի շնորհիվ ցրված ու մեկուսացած գյուղերը միանում էին քաղաքի հետ։

Քաղաքները, որոնց բնակչությունն արագ աճում է տարբեր գյուղերից այնտեղ բնակություն հաստատողների հաշվին, նպաստում են տարբեր ցեղերի ու ժողովուրդների ներկայացուցիչների միավորմանը, որոնք աստիճանաբար ազատվում են ցեղային անջատվողականության և էթնիկական մեկուսացման զգացումից։ Քաղաքներում ձևավորվում է բանվոր դասակարգը, որի շարքերում կան տարբեր էթնիկական խմբերի ներկայացուցիչներ։ Աշխատելով կառույցում կամ հանքահորում, համայնքի երեկվա անդամը ոչ միայն սովորում է ֆրանսերեն խոսել, այլև անցնում է դասակարգային համերաշխության և դասակարգային ինքնագիտակցության դպրոցը։ Ա. Լին գյուղացիների մասսայական և հարաճուն գաղթը դեպի քաղաքներն ու կառույցները համարում է առաջադիմական երևույթ, որը գյուղացուն ոչ միայն կտրում է «բթացնող կոնֆորմիզմից», այլև բարձրացնում նրա քաղաքական ակտիվությունը, ստեղծում է «նոր ինքնագիտակցության և նոր գործունեության մասնակցության պատրաստակամություն»[7]։

Դեռևս անցյալ դարի վերջին, վերլուծելով գյուղացիների մասսայական հոսքը դեպի քաղաքները, Վ. Ի. Լենինը գրել է. «Բնակչությունը հողագործությունից դեպի քաղաքները գրավելու նման՝ ոչ-հողագործական արտադնացությունը առաջադիմական երևույթ է ներկայացնում իրենից։ Նա պոկում է բնակչությունը հեռավոր, հետամնաց, պատմության կողմից մոռացված խուլ անկյուններից և ներգրավում է նրան արդի հասարակական կյանքի հորձանուտի

[6] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 580։

[7] A. Ly, L'Etat et la production paysanne, Paris, 1958, էջ 249։

մեջ։ Նա բարձրացնում է բնակչության գրագիտությունն ու նրա գիտակցականությունը, պատվաստում է նրան կուլտուրական սովորություն ու պահանջմունքներ»[8]։

Ազգային միասնությունը, որը գնում է ապագա ազգի հիմքը, աֆրիկյան երկրներում ամենից առաջ չէր կարող իրականացվել տնտեսական այն բազիսի վրա, որը պատմական մի շարք պատճառների բերումով զարգացմամբ խիստ ետ էր մնացել և պետությունը իր վրա էր վերցրել քաղաքական վերնաշենքի հիման վրա ազգային միասնության կազմակերպչի ֆունկցիաները։ Աֆրիկացի գաղափարախոսները աֆրիկյան ազգի ձևավորման առանձնահատկությունը հիմնավորում են այդ պրոցեսում պետության կատարած պատմական դերի դիրքերից։ Ազգային շինարարության գործում պետության դերի ու նշանակության մասին Լ. Սենգորը գրում է. «Եթե ազգը հայրենիքի վերաստեղծման գիտակցական կամքն է, ապա պետությունը դրա հիմնական միջոցն է։ Պետությունն ազգի համար այն է, ինչ ձեռնարկատերը ճարտարապետի համար։ Այն մարմնավորվում է հաստատությունների՝ կառավարության, պառլամենտի, հասարակական ծառայությունների մեջ, իսկ պաշտոնյաները նրա բանվորներն են։ Հենց պետությունն է արտահայտում ազգի կամքը և ապահովում նրա անսասանությունը»[9]։ Աֆրիկյան հասարակությունում հետամնաց տնտեսական բազիսը և ազգային կառուցվածքի տարատեսակությունը պետք է վերափոխվեին պետական ինստիտուտների ներգործության տակ։ Միայն պետությունն էր ընդունակ միջամտելու երկրի տնտեսական կյանքի բոլոր ոլորտներին, ստեղծելու տնտեսական ընդհանուր շուկա, բնակչության բոլոր խավերին մոբիլիզացնելու՝ իրականացնելու համար համապետական խնդիրներ։ Աֆրիկացի տեսաբանների կարծիքով՝ պետությունը ընդունակ է ոչ միայն ազգային մեկ ընդհանրության մեջ միավորելու բոլոր էթնիկական խմբերն ու ցեղերը, այլև բնակչության գիտակցությանը հասցնելու քաղաքացիության և ոչ միայն իր ցեղին, այլ պետությանը պատկանելու զգացումը, դաստիարակելու շահերի ընդհանրության գիտակցություն։ Բացի այդ, պետությունը բոլոր ազգային խմբերի շահերը ներկայացնում է միջազգային ասպարեզում, հանդես գալով որպես մեկ ընդհանրության մեջ միավորված ցեղերի ու ժողովուրդների ներկայացուցիչ։ «Ազգային միասնությունը,— գրում է Կամերունի պրեզիդենտ Ա. Ահիջոն,— նշանակում է, որ ազգի շինարարական հրապարակում չկան ոչ էվոնդոներ, ոչ դուալաներ, ոչ բալինկեներ..., բայց ամենուրեք ու միշտ միայն կամերունցիներ են»[10]։

Մի քանի պետությունների միավորման բազայի վրա նեգրա-աֆրիկյան մեծ ազգի ստեղծման գաղափարը եղել է աֆրիկյան ազգայնականության շատ գաղափարախոսների նպատակը։ Լ. Սենգորը պայքարում էր պետությունների միավորման հիման վրա աճած նեգրա-աֆրիկյան ազգի համար։ «Մեր ծրագիրը,— գրել է նա,— որը ելնում էր մեր դոկտրինայից, հնարավորություն կտա ֆեդերատիվ պետության մեջ իրականացնել նեգրա-աֆրիկյան ազգի ձևավորումը»[11]։

---

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 746—747։
9 L. S. Senghor, նշվ. աշխ., էջ 24։
10 „La pensee politique d'Ahmadou Ahidjo", Monté-Carlo, 1968, էջ 22։
11 L. S. Senghor, նշվ. աշխ., էջ 41։

Ազգային միասնության լոզունգը նախատեսում էր, առաջին հերթին, նախկին գաղութային տարածքների բազայի վրա պետությունները միավորելու պահանջը։ «Աֆրիկյան սոցիալիզմի» գաղափարախոսները հասկանում էին, որ փոքրաքանակ բնակչությամբ մանր պետությունների գոյությունը համապատասխանում է իմպերիալիզմի շահերին, քանի որ այդպիսի պետություններն ի վիճակի չեն դիմագրավելու նեոդաղութատիրությանը, անընդունակ են ինքնուրույնորեն լուծելու սոցիալ-տնտեսական մեծ խնդիրներ և իրականացնելու առաջադիմական սոցիալական վերափոխումներ։ Մարդկային ու բնական ռեսուրսների միավորումը, ներքին շուկայի ընդլայնումը նախադրյալներ կստեղծեն ազգային արդյունաբերության կազմակերպման համար, կուժեղացնեն տնտեսական պոտենցիալը և վերջին հաշվով կնպաստեն տնտեսական անկախության նվաճմանը։

Անկախության նախադռանը «աֆրիկյան սոցիալիզմի» գաղափարախոսները պաշտպանում էին պետության ֆեդերատիվ կառուցվածքի գաղափարը։ Լ. Սենգորը եղել է ֆեդերատիվ հիմքի վրա ազգային համախմբման կողմնակիցը և Մալիի ֆեդերացիայի ստեղծման՝ Սենեգալի ու Մալիի միավորման նախաձեռնողներից մեկը։ Աֆրիկյան պետությունների «բալկանացման» մեջ Լ. Սենգորն արդարացիորեն տեսնում էր նրանց հետամնացության հիմնական պատճառներից մեկը։ Աֆրիկյան ազգայնականության հեղափոխական-դեմոկրատական ուղղության ներկայացուցիչները աֆրիկյան միասնությունը գիտում էին որպես տնտեսական հաջող զարգացման, համաշխարհային պատմության մեջ աֆրիկյան պետությունների դերի ուժեղացման միջոց։ Այդ ուղղության խոշորագույն ներկայացուցիչներից Ք. Նքրուման գտնում էր, որ միասնական Աֆրիկան կդառնա «դեմոկրատիայի միջնաբերդը», որը աֆրիկյան քաղաքացիների համար կերաշխավորի մարդու հիմնական իրավունքները, կապահովի Աֆրիկայի տնտեսական զարգացումը և կամրապնդի նրա ռազմական հզորությունը[12]։

Ազգային-ռեֆորմիստական ուղղության գաղափարախոսները, հետևելով էկոնոմիկայի ու քաղաքականության նկատմամբ կուլտուրայի առաջնության իրենց թեզիսին, պայքարում էին նեգրա-աֆրիկյան ժողովուրդների կուլտուրական ինտեգրացման համար։ Լ. Սենգորի կարծիքով, ազգերը, միավորվելով և միմյանց լրացնելով իրենց տարբերիչ գծերով, կանխորոշում են համամարդկային հավասարությունը։ Այստեղ նկատվում է ֆրանսիացի փիլիսոփա Պ. Թեյյար դը Շարդենի՝ համամարդկային կոնվերգենցիայի գաղափարի ազդեցությունը։ Լ. Սենգորը փորձում է այն կիրառել ֆեդերատիվ պետության իր տեսության նկատմամբ։ Ֆեդերատիվ պետության գաղափարը առաջադիմական նշանակություն ունի Արևադարձային Աֆրիկայի երկրների զարգացման համար, եթե ֆեդերացիան հիմնված է պետությունների կամավոր միավորման վրա և պետական իշխանությունը գտնվում է առաջադեմ ուժերի ձեռքում։

Պետությունները ֆեդերատիվ հիմքի վրա կարող են միավորվել միայն այն ժամանակ, երբ այդ պետությունների ժողովուրդների դասակարգային շահերը համընկնում են և հետապնդում միատեսակ նպատակներ։ Վ. Ի. Լենինը հանդես էր գալիս դեմոկրատական կարգ ունեցող պետությունների

---

[12] K. Nkrumah. L'Afrique doit s'unir, Paris, 1964, էջ 246—247։

միավորման, պրոլետարական միասնության հիմքի վրա տարբեր ազգերի միավորման օգտին։ «Մենք ուզում ենք հեղափոխական միացում,—գրել է նա,— այդ պատճառով էլ չենք դնում ընդհանրապես բոլոր և ամեն տեսակ պետությունների միավորման լոզունգը, որովհետև սոցիալական հեղափոխությունը օրակարգում դնում է միայն այն պետությունների միավորումը, որոնք անցել են և անցնում են դեպի սոցիալիզմ, ազատագրվող գաղութները և այլն»[13]։

Լենինյան այս դրույթը կարևոր նշանակություն ունի ֆեդերատիվ պետությունների ստեղծման գործում։ Այն պետությունները, որոնք դեռևս տընտեսական կախման մեջ են գտնվում իմպերիալիզմից և որտեղ իշխանության գլուխ կանգնած է իմպերիալիզմի հետ փոխհամաձայնության դիմելու հակված կառավարող վերնախավը, դրանք չեն կարող կայուն ֆեդերացիա ստեղծել։ Գտնվելով տնտեսության կապիտալիստական սիստեմի ուղեծրում, այդ պետությունների բուրժուազիան և կառավարող վերնախավը, ելնելով իրենց նեղ շահերից, համաձայնության են գալիս օտարերկրյա մոնոպոլիաների հետ, իսկ վերջիններիս համար աֆրիկյան պետությունների միասնությունը ձեռնտու չէ։ Հետևաբար, զարմանալի չէ, որ չնայած Աֆրիկայում ազգային միասնության գաղափարը մեծ ժողովրդականություն է վայելում, բայց պետությունների միավորման փորձերի մեծ մասը վերջացել է ձախողմամբ[14]։

Մալիի ֆեդերացիայի պառակտումից հետո Սենեգալի պետական գործիչ Գ. դ'Արբուսիեն գրել է. «Աֆրիկյան այն պետությունները, որոնք նոր են անկախություն ձեռք բերել, պետք է ամեն գնով խուսափեն կլասիկ տիպի ֆեդերալիզմի կրկնությունից՝ ֆեդերացիան կազմող հասարակությունների ինքնօրինակությունն ու ինքնավարությունը խեղդելու նրա կասկածելի տենդենցով»[15]։ Վերլուծելով Մալիի ֆեդերացիայի փորձը, Սենեգալի քաղաքական գործիչները ֆեդերացիայի պառակտման պատճառը տեսնում են Արևադարձային Աֆրիկայում տերիտորիալիզմի և տեղական ազգայնականության ուժեղ տենդենցների դրսևորման մեջ։ Այդ առթիվ Մ. Դիան գրել է, որ Մալիի ֆեդերացիայի պառակտումը «հակասում է նեգրա-աֆրիկյան ազգերի ձևավորման մեր տեսություններին»[16]։

Այդ պառակտումն ավելի շուտ վկայում էր այն մասին, որ միայն կուլտուրական ընդհանրության հիմքի վրա պետությունների միավորման ամեն մի փորձ, որի համար մարտնչում են «աֆրիկյան սոցիալիզմի» գաղափարախոսներն ազգային հարցում, կավարտվի ձախողմամբ, եթե միավորման հիմքում չդրվեն տնտեսական ու քաղաքական գործոնները։ Տնտեսական տեսակետից Սենեգալը ավելի զարգացած էր իր հարևանից. բնակչության մեկ շընչին ընկնող ազգային եկամտով Սենեգալը գրավում է առաջին, իսկ Մալին՝ վերջին տեղերից մեկը Աֆրիկայում։ Հաշվի չէր առնվել նաև քաղաքական գործոնը, որը վճռական դեր խաղաց Մալիի ֆեդերացիայի պառակտման

---

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 207։

14 Մալիի ֆեդերացիան գոյություն ունեցավ 1959 թ. հունվարից—1960 թ. օգոստոսը. Գանան Գվինեայի հետ միավորելու փորձը ևս արդյունք չտվեց։ Աֆրիկայում կա կայուն ֆեդերացիայի միայն մեկ օրինակ՝ Տանզանիան, որը Տանգանիկան միավորել է Զանզիբարի հետ։

15 G. D' Arboussier, Le Fédéralisme et l'Afrique („Revue politique et parlementaire"), 1962, N 722, 33.

16 B. Traore, M. L6. M,. J. L. Alibert, Forces politiques en Afrique Noire, Paris 1966, էջ 174.

գործում. կառավարող վերնախավը Սենեգալում անկախություն նվաճելուց հետո վարում էր Ֆրանսիայի հետ սերտ համագործակցության քաղաքականություն և զարգացման ոչ կապիտալիստական ուղու կողմնակից չէր, մինչդեռ պետական ղեկավարությունը Մալիում կազմված էր հեղափոխական-դեմոկրատական ուղղության ներկայացուցիչներից, հանդես էր գալիս որպես ոչ կապիտալիստական ուղու կողմնակից և վարում էր Սովետական Միության ու սոցիալիստական մյուս երկրների հետ համագործակցելու քաղաքականություն։ Հենց Սենեգալի և Մալիի կառավարող խմբերի դասակարգային շահերի և այդ երկրների սոցիալ-տնտեսական կառուցվածքների տարբերությունն էլ եղավ ֆեդերացիայի ձախողման պատճառը։

Արևադարձային Աֆրիկայում ֆեդերատիվ պետություններ ստեղծելու անհաջող փորձերից հետո ուժեղացավ մեկ պետության սահմաններում ազգային միասնությունն ամրապնդելու տենդենցը։ Պետական ինստիտուտներն իրենց ջանքերն ուղղում են մեկ տարածքում ապրող էթնիկական խմբերն ու ժողովուրդները միավորելու նպատակին։ Միասնական պետությունը տնտեսական և սոցիալական նախադրյալներ է ստեղծում ազգային համախմբման և միասնական ազգի ձևավորման համար։ Ազգային համախմբումը խթանվում է պետության կողմից իրականացվող սոցիալ-քաղաքական միջոցառումների մեջ էթնիկական բոլոր խմբերի ներգրավման միջոցով։ Բանակը, քաղաքական կուսակցությունները, արհմիությունները և այլ հասարակական կազմակերպություններ միավորում են էթնիկական տարբեր խմբերի ներկայացուցիչներին։ Կրթության միասնական սիստեմը, ռադիոն ու հեռուստատեսությունը ևս նպաստում են ազգային համախմբման պրոցեսին։ Արևադարձային Աֆրիկայի երկրներում ազգի ձևավորման առանձնահատկությունն այն է, որ ազգը ծագում է պետական հիմքի վրա և ոչ թե հակառակը, ինչպես այդ տեղի ունեցավ Եվրոպայում։

Այսպիսով, «աֆրիկյան սոցիալիզմի» գաղափարախոսները ազգի և պետության պրոբլեմը լուծում են սոցիալ-տնտեսական խնդիրների ընդհանրությունից կտրված. խնդիրներ, որոնք պահանջում են մոբիլիզացնել բնակչության բոլոր խավերին։ Հանդես գալով ավանդական հասարակության «ինքնատիպությունը» և համայնական ավանդական կապերը պահպանելու օգտին, «աֆրիկյան սոցիալիզմի» տեսաբաններն ըստ էության արգելակում են սոցիալական առաջադիմության պրոցեսը մանավանդ գյուղում։ Բնակչության ճնշող մեծամասնությունը, որն ապրում է գյուղական վայրերում, անմասնակից է մնում ազգային համախմբման պրոցեսին, իսկ դա նշանակում է պահպանել ազգային տարանջատվածությունն ու էթնիկական անջատվողականությունը։

НАЦИЯ И ГОСУДАРСТВО В «АФРИКАНСКОМ СОЦИАЛИЗМЕ»

А. А. АРУТЮНЯН

Резюме

В концепции «африканского социализма» понятие нации предопределяется в основном общностью культурных и духовных ценностей негро-африканских народов. Культуре отдается приоритет также в во-

просе национальной консолидации, а в культурной самобытности негро-африканцев усматривается основная предпосылка национального самоопределения. Понятие «нация» в концепции «африканского социализма» рассматривается в тождестве с понятием «государство». Государство в этой концепции играет определяющую роль в процессе формирования и становления негро-африканской нации, так как национальная интеграция и становление наций в негро-африканских государствах не является следствием внутреннего исторического развития, а происходит в основном благодаря вмешательству государственных институтов в этот процесс.